

ուրբ միով յառաջ ժամանեցին խոյս տալ ի քաղաքէն եւ անծին հոգալ, եւ ոչ ինքն կաթողիկոսն Յոհան: 12 Այլ ամենազաւր գթութիւն Փրկչին Քրիստոսի ողորմեալ ինայեաց յուխտասեր հաւտն իւր, եւ ածեալ ողջ զհայրն սուրբ՝ ե-ցոյց խաղաղութեամբ ժողովրդեան իւրում եւ ուրախացոյց:

13 Եւ ի նմին աւուր, յետ վճարելոյ գործոյ պատերազմին, գայր հասաներ սեպուհն Մամիկոնեից Մուշեղ հանդերձ այրուծիովն որ էին¹ ընդ նմա. եւ իբրեւ ոչ ինչ ժամանեալ յանբաւկ² գործոյ պատերազմին պիտոյից՝ դարձեալ ընդ այլ փախստեիցն զնային ի բաց:

ՅԹ. Եւ այսպէս³ ցրուեալ այսր եւ ⁴անդր զաւրքն Զայոց իւրաքանչիւր սփռեին: 2 Եւ զնայր զաւրավարն Զայոց Վահան Մամիկոնեան ինքն եւ նախարարքն Զայոց որք ընդ նմա էին, հանդերձ իւրաքանչիւր ուրուք դայեկաւք եւ սիրելի ծառայիւք, ուշ եղեալ երթալ դադարել առ վայր մի յամուր տեղիս սահմանացն Խաղտեաց, ոգի առնուլ եւ հանգչել առ վայր մի, եւ մնալ յուսով եւ սպասել փրկութեան Տեառն: 3 Չորոց զկնի հետամտեալ ճեպով անհանգիստն Զազարաւուխտ՝ երթայր դիմեալ ամենայն զաւրաւքն հանդերձ. եւ զբազում տեղիս ամրոցացն Զայոց ընդ երթալն առեալ հարկաներ, քակեր աւերեր եւ անցաներ. եւ զբազումս կոտորեալ՝ հաներ արեանց ճապաղիս. ինդրեր հնարս, փթալով մեծամեծս, կա՛մ առնել ձերբակալս զբաջ Մամիկոնեանն Վահան եւ կամ սպանանել պատերազմաւ, եւ ապա հանգչել:

4 Եւ երթեալ յՌթաղն՝ բանակեր մաւտ ի գեաւղն, որում անուն էր⁵ միւսմն Գիւղիկ⁶ եւ միւսումն Վարդաշէն. եւ բանակեալ անդ զաւրն զայն՝ լսեր ի վաղիւն, թէ Մամիկոնեանն Վահան մաւտ է ի նա ի Վարայրվարոյն⁷ ի Զոռմ տան, ի գաւառին որ կոչի Շաղագոմ: 5 Եւ կարծեցեալ անդ լինել զիմաստախորհուրդ Մամիկոնեանն յանհոգս, որպէս ի Զոռմ տուն⁸ անկեալ՝ պնդեալ⁹ յանկասկածս զցայգ ի տեղին՝ տեղեակ առաջնորդաւք հասաներ ընդ առաւաւտուն ծագել: 6 Եւ գտեալ անդ բազմութիւն այլ մարդկան, ընդ որս դիպեցան եւ կանայք երկուց Կամսարականացն, տեառնն Շիրակայ Ներսէի եւ Զրահատայ, յորոց վերայ անկեալ յանզգաստս զաւրացն Պարսից՝ զբազումս ի ռամիկ մարդկանէն Զայոց սպանանէին. եւ զկանայս եր-

1 ՁԱտ. որք էին

2 ՁԱտ. յանբաւ. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

3 ԲԳտ. չիք այսպէս

4 Ձ. անտր... յիւրաքանչիւր

5 Ձ. որում անուն է

6 ՁԱտ. գեւղիկ

7 Ձ. ի վար այր վարոյն. Գտ. ի նա Վարայրվարոյն

8 ՏՏ. ի Զոռմ տան

9 Ձ. պնդել